«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՐՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ	«Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում»
ԱՌԱՐԿԱՆ	Տարրական դասարանի դասվար
ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ	Էմմա Դանիելյան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Արագյուղի «Տիգրանակերտ կրթական միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

Բովանդակություն……2

Ներածություն……3

§1 *Գրական ակնարկ:* Երեխայի իրավունքների իրացման հիմնական պահանջները և ՀՀ պարտավորությունները երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում……..4

§2 Մարդու/սովորողի իրավունքներն ու ազատությունները որպես որպես կրթության բաղկացուցիչ մաս……9

§3 Ավարտային դասավանդման ընթացքում կրթական գործընթացի կազմակերպումը՝ մարդու/սովորողի/ կրթություն ստանալու իրավունքի հիման վրա…….....13

§4 Սովորողների հիմնարար իրավունքները, ազատությունները և պարտականությունները……16

Եզրակացություն……...……18

Օգտագործված գրականության ցանկ……20

Ներածություն

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ՝ երեխա է:[1] Այս առումով շատ կարևոր է քննարկել երեխայի իրավունքների իրացման հիմնական պահանջները և ՀՀ պարտավորությունները երեխաների պաշտպանության ոլորտում:

Ուսուցումը տարբեր գործունեությունների ամբողջություն է, որի ընթացքում յուրաքանչյուր սովորող ձեռք է բերում բազմազան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի գործունեությունն իր մեջ ներառում է առաջադրանքների ահռելի շրջանակ, որի նպատակներից է նախ իրազեկել, ապա սովորեցնել և պաշտպանել իրենց իսկ իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը:

Սույն հետազոտական աշխատանքի **նպատակն է՝** ավարտային դասավանդման ընթացքում սովորեցնել և միաժամանակ պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները:

Նպատակից բխող **խնդիրներն են՝**

- Սովորողին իրազեկել և սովորեցնել իրենց իսկ իրավունքները և պարտավորությունները:
- Սովորեցնել հարգել ինչպես մյուս սովորողների, այնպես էլ ուսուցիչների իրավունքներն ու ազատությունները:
- Պաշտպանել սովորողների պատիվն ու արժանապատվությունը:

Թեմայի **արդիականությունը** կայանում է նրանում, որ երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետության առջև դրված խնդիրներից մեկն է, քանի որ ընտանիքում ապրելը և պատշաճ դաստիարակություն ստանալը կարևոր երաշխիք է երեխայի մյուս իրավունքների իրացման և երեխայի զարգացման համար:

§1 Գրական ակնարկ:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503

Երեխայի իրավունքների իրացման հիմնական պահանջները և ՀՀ պարտավորությունները երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում

Երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության և ըմբռնման մթնոլորտում:

Ստորագրելով ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա)՝ մասնակից երկրները պարտավորվել են հարգել երեխաների իրավունքները և իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ արձագանքելու երեխաների իրավունքների խախտումների դեպքերին: Կոնվենցիայի առաջին մասով, ինչպես նաև վերջինիս կից կամընտիր արձանագրություններով սահմանվում են երեխաների իրավունքների պաշտպանությունն ապահովող համապատասխան պարտավորությունները: Կոնցենցիայի 12-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում: Ընտանիքում ապրելը երեխային հնարավորություն է տալիս զարգանալ և մեծանալ՝ որպես հասարակության լիարժեք անդամ, ով մասնակցություն կունենա նաև պետության կառավարման գործընթացին: Այս առումով, կարևոր է, որպեսզի պետությունում և հասարակությունում հարգվի նաև ծնողների՝ իրենց երեխային դաստիարակելու իրավունքը: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պետք է հարգի ծնողների պատասխանատվությունը, իրավունքները և պարտականությունները՝ երեխայի զարգացող ունակություններին համապատասխան ուղղություն տալու երեխային՝ նրա

կողմից Կոնվենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս:[2] Ցավոք, միշտ չէ, որ երեխաները հնարավորություն ունեն ապրելու ընտանիքում: Տարբեր հանգամանքների բերումով նրանք կարող են հայտնվել նաև հատուկ հաստատություններում, ազատությունից զրկման վայրերում և այլն: Այս վայրերում երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրը ստանում է առավել մեծ արդիականություն: Սա հատկապես վերաբերում է երեխաներին շրջապատող սոցիալական միջավայրում նրանց իրավունքների պաշտպանության արդիականությանը, որը պայմանավորված է վերջին տասնամյակներում հայաստանյան հասարակության անցումայնությամբ, ազգային արժեքների հետ մեկտեղ առաջ եկած և տարբեր գործոնների ազդեցության հետևանքով արագ տարածվող հարարժեքների տարածման փաստով: Մասնավորապես, քրեական բարքերի և կոնֆլիկտայնության դրսևորումները բակում, դպրոցում, դրանց մշտական ցուցադրումը և դրանք կրողների հերոսացումը ԶԼՄ-ներում ստեղծում են երեխաների իրավունքների խախտման պրակտիկ նախադեպեր և մեծացնում հետագայում երեխաների հանդեպ ֆիզիկական և հոգեբանական բռնության ռիսկեր:

Երեխաների իրավունքների պաշտպանության հիմքում ընկած է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, որի համաձայն երեխաների շահերը գերակա արժեք են: Այսպես, ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված է. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:[3] Նույն իրավունքից օգտվում են ազատազրկված, հատուկ հաստատություններում հայտնված երեխանները, որոնք լավագույն շահը նույնպես պետք է պետության և համապատասխան հաստատությունների կողմից երաշխավորված լինի: ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածով ամրագրված է, որ կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է գործադրեն բոլոր հնարավոր

[2]ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», Պրեամբուլա, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503

[3] http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf, էջ 3

ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Նշվածն, ըստ էության, ներկայացնում է լսված լինելու իրավունքը, որից էլ ածանցվում է իրավունքների խախտումների վերաբերյալ բողոք ներկայացնելու իրավունքը, որը տարբեր կերպ է իրացված Կոնվենցիայի մասնակից երկրներում:

Այս առումով, պետական յուրաքանչյուր վերաբերելի մարմնին բողոք ներկայացնելով՝ երեխան բացի այլ իրավունքներից, իրացնում է իր՝ լսված լինելու իրավունքը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն իր՝ Բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իավունքի վերաբերյալ թիվ 13 Ընդհանուր մեկնաբանության մեջ նշել է, որ, պետությունները պետք է ունենան երեխաների պաշտպանության՝ անվտանգ և պատշաճ հրապարակված մեխանիզմներ, որպեսզի երեխաները և այլ անձիք կարողանան ահազանգել, երբ երեխայի նկատմամբ բռնության դեպք է տեղի ունենում:[4] Կոմիտեն նշել է նաև, որ շուրջօրյա հեռախոսահամարի գործելը կարող է լինել այդ մեխանիզմներից մեկը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների թիվ 12 Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները պետք է հարգվեն հետևյալ 9 սկզբունքները. Երեխայի լսված լինելու իարվունքը, Երեխայի իրավունքների կոմիտե, 2009 թվական,[5]

1. **Թափանցիկություն և տեղեկացվածություն:** Երեխաները պետք է տեղեկացված լինեն իրենց լսված լինելու իրավունքի վերաբերյալ:
2. **Կամավորություն:** Երեխային չպետք է պարտադրել, որպեսզի նա հայտնի իր կարծիքը:
3. **Հարգանք:** Երեխայի կարծիքը պետք է հարգել:
4. **Վերաբերելիություն:** Երեխայի հայտնած կարծիքը պետք է իրական կապ ունենա իր կյանքի հետ: Ավելին, երեխան պետք է կարողանա հայտնել իր կարծիքը այն խնդիրների մասին, որոնք հենց իր կարծիքով կարևոր են իր համար:

[4] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf
[5] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf

5. **Երեխայակենտրոն միջավայր և աշխատելու մեթոդներ:** Երեխաների հետ աշխատելու մեթոդները պետք է լինեն երեխաների համար հարմարեցված, քանի որ երեխաներն ունեն տարբեր կարիքներ և նրանք պետք է պատրաստ լինեն, որպեսզի կարողանան արտահայտել իրենց կարծիքը:
6. **Ներառականություն:** Երեխայի մասնակցությունը պետք է լինի նեռարական, այսինքն՝ պետք է բացառվի ցանկացած տեսակի խտրականություն: Երեխաները մեկ ընդհանուր խումբ չեն և նրանք պետք է ունենան հավասար հնարավորություններ՝ իրենց անհատականությունը հաշվառմամբ:
7. **Երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստում:** Երեխաների հետ աշխատող անձիք պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան ճիշտ շփվել երեխաների հետ: Այս հարցում հենց երեխաների մասնակցությամբ վերապատրաստումը կարող է արդյունավետ լինել:
8. **Անվտանգության ապահովում:** Երեխան իր կարծիքը արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա եթե նա խոսի իրեն հուզող հարցերից:
9. **Հետևողականություն:** Ցանկացած խորհրդատվական գործընթաց պետք է լինի հետևողական և երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես իրենց կարծիքը լսեցին և հաշվի առան:

1993 թվականին, Կոնվենցիայի վավերացմամբ, ՀՀ պարտավորվեց իր օրենսդրությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի դրույթներին: Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը նաև ճանաչեց, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում և լիարժեք պաշտպանված լինի:

Երկրի բարեկեցության ամենակարևոր նախադրյալը երեխաների շահերին նպատակաուղղված պետական քաղաքականությունն է: Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում:

1996 թվականին ՀՀ-ում ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը նպաստեց, որպեսզի ՀՀ-ում ձևավորվի երեխաների իրավունքների պաշտանության համակարգը: [6]

Այնուամենայնիվ, չնայած վերը նշված համակարգի ստեղծմանը՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում դեռևս կան խնդիրներ, որոնց մասին բազմիցս նշվել տարբեր հարթակներում: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն նշել է նաև, որ այդ գործում ՀՀ պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի ընտանիքում, դպրոցում, խնամք իրականացնող հաստատություններում և դատարաններում իրեն վերաբերող հարցերում երեխայի կարծիքը հարգելու ուղղությամբ: Կոմիտեն առաջարկել է նաև, ունենալ Երիտասարդական պառլամենտ և խթանել երեխաների մասնակցությունը պառլամենտում:

Այսպիսով, շատ կարևոր է հարգել երեխայի կրթություն ստանալու իրավունքը, այն է՝ ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը:[7]

[6] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf

[7]Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ, հոդված 2, կրթության իրավունք

§2 Մարդու/սովորողի իրավունքներն ու ազատությունները որպես կրթության բաղկացուցիչ մաս

Ըստ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի՝

- Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազն տարրական և հիմնական փուլերում, անվճար է: Տարրական կրթությունը պարտադիր է: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ հավասարապես մատչելի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների:
- Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուժողականությանն ու բարեկամությանը, էլ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը:
- Ծնողներն ունեն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք:[8]

Մարդու իրավունքների արժեքները ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ և օրենքներում: Այդ արժեքները դրված են նաև կրթական փաստաթղթերի հիմքում: Արդի ժամանակաշրջանում ակնառու են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումները հնարավոր է նորարարական, ներառական և համագործակցային մոտեցումների դեպքում:

Կրթության դերն առանցքային և անփոխարինելի է գլոբալ խնդիրների լուծման հարցում՝

- Աղքատության աճ և բևեռացում: Այսօրվա լրջագույն խնդիրներից մեկն աղքատության շարունակական աճն ու հասարակության առավել հարուստ և

[8]Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր՝ ընդունված և հռչակված ընդհանուր վեհաժողովի, 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևով, հոդված 26

աղքատ խմբերի միջև տարբերությունների մեծացումն է: Նման բևեռացումը հնարավոր է հաղթահարել հասարակության աղքատ խավերի համար որակյալ կրթական ծառայությունները հասանելի դարձնելու միջոցով:

- Տեղեկատվության անկառավարելի հոսքեր: Տեխնոլոգիաների զարգացման արդյունքում, տեղեկությունները և գիտելիքները դարձել են մատչելի և հասանելի բոլորին: Եթե այս հանգամանքը չուղեկցվի ուսումնական հաստատությունների աշխատառճի ժողովրդավարացմամբ, ապա սովորողները պարզապես չեն վստահի ուսումնական հաստատություններին՝ դրանք համարելով ժամանակավրեպ, հետևաբար, սովորելու գործընթացը կտեղափոխվի ուսումնական հաստատություններից դուրս:
- Կայուն զարգացման խոչընդոտներ և բնապահպանական հիմնախնդիրներ: Հայաստանի Հանրապետությունում ընթացող տնտեսական բարեփոխումները և միջազգային բնապահպանական համագործակցության ընդլայնումը կնպաստեն էկոլոգիական նոր քաղաքականության ձևավորմանը, որը ներկա և ապագա սերունդների համար կստեղծի կայուն երաշխիքներ՝ էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրում առողջ և բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Նման նպատակի իրագործումը կարևոր խնդիր է, և անհնար է առանց բնապահպանական կրթության և քաղքացիների իրազեկման բարձրացման:

Կրթական բարեփոխումների կարևորագույն և առանցքային բաղադրիչն է սովորողի կրթության իրավունքը: Վերջին տարիներին կրթության ոլորտում իրականացվել են օրենսդրական կարևոր փոփոխություններ՝ կրթության բովանդակության բարելավմանն ուղղված որոշակի քայլեր և բազմաթիվ ծրագրեր:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը՝ կրթության զարգացման պետական ծրագիրն է: Օրենքը սահմանում է, որ պետական քաղաքականությունն իրականացվում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթի ապահովմամբ: Ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների դպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները լիովին համահունչ են մարդու իրավունքների վերաբերյալ առկա միջազգային փաստաթղթերի պահանջներին և մոտեցումներին: «Հանրակրթության մասին» ՀՀ 11 օրենքի համաձայն հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում և վերահսկում է.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը,
2) ազգային և համամարդկային արժեքները,
3) մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
4) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.
5) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերումն ու կիրառումը, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.
6) սովորողի պաշտպանված լինելը ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով

խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը,

7) մասնակցությունը ուսումնական հաստատության կառավարմանը,
8) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
9) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները, օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից: Մարդու իրավունքների և սովորողների իրավունքների համատեքստում հիշատակման են արժանի նաև սովորողների առողջության պահպանման, նրանց խրախուսման վերաբերյալ հոդվածները, որոնք սահմանում են բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և բարոյապես ու նյութապես խրախուսված լինելու իրավունքները:[9]

Կարևորվում է նաև կրթության մատչելիությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, ինչն ուղղակիորեն առնչվում է ոչ միայն կրթության իրավունքին, այլ նաև որևէ խտրականության բացառմանը:

Կրթությունը չունի սահմանափակումներ

Սովորողներն ուսուցման գործընթացում անխուսափելիորեն բախվում են սխալվելու, ռիսկի դիմելու, օգնություն և հոգատարություն ակնկալելու խնդիրներին: Սովորողները կխուսափեն կրթության համար այդ բացառիկ հնարավորությունից, եթե չզգան, որ դպրոցի մշակույթը պատրաստ է հարգելու իրենց իրավունքները:

[9] ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», Պրեամբուլա, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503

§3 Ավարտային դասավանդման ընթացքում կրթական գործընթացի կազմակերպումը՝ մարդու/սովորողի/ կրթություն ստանալու իրավունքի հիման վրա

Մարդու/սովորողի/ կրթությունը պետք է իրականացվի նախադպրոցական տարիքից՝ շահագրգիռ բոլոր կողմերի՝ պետական կրթական քաղաքականություն մշակողների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության ոլորտի մասնագետների, ուսումնական հաստատությունների, ծնողների, սովորողների և ուսանողների ինքնավարության մարմինների, ՀԿ-ների, երիտասարդական կազմակերպությունների և ԶԼՄ-ների լայն համագործակցությամբ՝ ապահովելով համակարգային մոտեցում:

Իրենց գործունեությունն իրականացնելիս, անկախ տվյալ հաստատության կարգավիճակից, կառուցվածքից, սեփականության ձևից, ենթակայությունից կամ այլ հանգամանքներից, ուսումնական հաստատությունները ոչ միայն պարտավոր են ապահովել մարդու իրավունքները, այլև պետք է ամեն կերպ խրախուսեն կրթության յուրաքանչյուր օղակում երեխաների և սովորողների ակտիվ մասնակցությունը, ինքնադրսևորումը, շփումները, համատեղ աշխատանքն ու համագործակցությունը: Ուսումնական հաստատություններում կարգապահության պահպանմանն ուղղված գործողություններում պետք է բացառել սովորողների և մանկավարժների իրավունքների անտեսումը, մարդկային արժանապատվության վիրավորումը:

Վերոնշյալ հայեցակարգային դրույթների կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ է՝ ուսումնական հաստատություններում ստեղծել այնպիսի միջավայր, որը կերաշխավորի երեխաների, սովորողների առողջության, հանգստի հիմնարար իրավուքների պաշտպանությունը: Այդ գործընթացը ենթադրում է ֆիզիկական և առողջ սոցիալական միջավայրի ապահովում, խաղի, ֆիզիկական ակտիվության դրսևորման, հանգստի կազմակերպման հնարավորությունների ստեղծում՝ դասամիջոցներին և դասերից հետո, պատշաճ ջերմային ռեժիմի ապահովում, առողջ սննդի հնարավորություն, բացառապես առողջ ապրելակերպին համահունչ վարքագծի խրախուսում:

Այդպիսով սովորողների նկատմամբ պետք է ցուցաբերել համակողմանի մոտեցում՝ կարևորելով ոչ միայն ակադեմիական, այլև առողջապահական, ֆիզիկական, հուզական, սոցիալական, հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացնել համապատասխան միջոցառումներ երեխայի կրթության, ազատ արտահայտման իրավունքի լիարժեք իրացման համար: Ապահովել հանրակրթության մատչելիությունը բոլոր սովորողների համար: Մասնավորապես, ապահովել բոլոր երեխաների հաճախումը դպրոց: Դպրոցների շենքային հնարավորությունները, գրադարանները, էլեկտրոնային ռեսուրսները մատչելի դարձնել բոլոր սովորողների համար: Ապահովել համագործակցային և հաշվետվողական աշխատառճ երեխաների ընտանիքների հետ:

Ուսումնական հաստատության կառավարման մարմինների, ուսուցիչների և ծնողների միջև ձևավորել բաց մտածողության և հարաբերությունների այնպիսի մշակույթ, որում կրթական գործընթացի բոլոր մասնակիցները ազատորեն կարտահայտեն իրենց տեսակետներն ու դիրքորոշումները: Այս դրույթը կյանքի կոչելու համար սովորողներին պետք է դիտարկել որպես ուսումնական գործընթացի կարևոր մասնակիցներ՝ ապահովելով նրանց ներգրավումը ուսումնական հաստատության կառավարման և ուսումնական գործընթացներում, ինչպես նաև համայնքային կյանքում: Մասնավորապես, պետք է ձևավորել քաղաքացիական պատասխանատվության արժեհամակարգ հարմարվողականության փոխարեն, առօրյա հարաբերություններում պետք է հաշվի առնել սովորողի շահերը և հանրային բարիքի ստեղծման գործում կարևորել յուրաքանչյուրի մասնակցության անհրաժեշտությունը:

Սովորողներին արժևորել բազմակողմանիորեն. նրանց մասին չդատել միայն ակադեմիական արդյունքներով: Բացահայտել ու զարգացնել սովորողների շնորհները, հնարավորություն տալ դրսևորելու իրենց կարողությունները և նպաստել նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

Երեխաների, սովորողների հետ հարաբերությունները կառուցել՝ հաշվի առնելով նրանց ուժեղ կողմերը, աջակցելով նրանց ընդհանուր ներուժի զարգացմանը: Մարդու իրավունքների ուսուցումը պետք է դիտարկել որպես ուսուցման գործընթացի հիմք՝

ապահովելով դրա ներառումը կրթական բոլոր աստիճաններում և ուսումնական բնագավառներում: Ուսուցման գործընթացում հարգել սովորողների առանձնահատկությունները և դրանք օգտագործել հարուստ, բազմազան և փոխլրացնող միջավայր ստեղծելու նպատակով: Ապահովել մեթոդների այնպիսի բազմազանություն, որը հնարավորություն կտա սովորել տարբեր ձևերով:[10]

Ավարտային դասավանդման ընթացքում ապահովել մարդու/սովորողի/ իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը ուսուցման ընդհանուր բովանդակության մեջ, ոչ թե կոնկրոտ առարկայի շրջանակներում:

Ուսուցանել ժամանակակից աշխարհում պահանջվող կոմպետենցիաներ՝ ապահովելու համար շրջանավարտների լիարժեք քաղաքացիական և մասնագիտական մասնակցությունը հասարակական կյանքին: Կարևոր է ուսուցման բովանդակությունը կառուցել փոխկապվածության, փոխկախվածության համակեցության արժեքների և սովորողների՝ հանրային բարիք ստեղծելու գործընթացի կարևոր մասնակիցը լինելու գաղափարների վրա:

Հնարավորություններ ընձեռել ոչ միայն ժողովրդավարական արժեքները և մարդու իրավունքները հասկանալու, այլև համայնքային կյանքին առնչվող սոցիալական նախագծերին մասնակցելու միջոցով մարդու իրավունքների կրթության կայացմանը նպաստող գործնական հմտությունները զարգացնելու համար:

Ներդնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, նրանց առաջադիմության գնահատման ժամանակակից ձևեր՝ կիրառելով բազմապիսի գնահատման գործիքներ, այդ թվում՝ թեստեր, շարադրություններ, խմբային աշխատանքներ, նախագծերի մշակում և իրականացում, հարցազրույցների վարում, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում և այլն, որոնք կնպաստեն սովորողի կարողությունների և ընդունակությունների բազմակողմանի դրսևորմանը:[11]

---

[10] Гребенюк О.С., Рожков М.И. Общие основы педагогики. М., 2003, с.628

[11] Տե՛ս նույն տեղում

§4 Սովորողների հիմնարար իրավունքները, ազատությունները և պարտականությունները

«Հանրակրթության մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները: Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Սովորողն իրավունք ունի՝

1. ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.
2. ծնողի համաձայնությամբ, ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
3. անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից. ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն.
4. մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին.
5. պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.
6. ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
7. ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
8. ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9. օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:[12]

Սովորողը պարտավոր է՝

1. կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.
2. ստանալ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.
3. հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.
4. կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:[13]

[12] ՀՀ օրենքը հանրակրթության մասին, հոդված 20
[13] Տե՛ս նույն տեղում

Եզրակացություն

Սույն հետազոտական աշխատանքը թույլ տվեց դուրս բերել մի շարք ուշագրավ նկատառումներ՝ առաջադրված խնդիրների ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների վերլուծությունն ու ամփոփումը հանգեցրեցին հետևյալին՝

- Սովորողի՝ իր իրավունքները և պարտավորությունների մասին իրազեկ լինելը, օգնում է պաշտպանել ինչպես իր, այնպես էլ հարգել դիմացինի իրավուքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ՝ հարգված են մարդու/սովորողի/ հիմնարար իրավունքները, քանի որ՝

- ✓ Սովորողները ձայնը լսելի է, ուստի կարող են ազդել իրենց ուսումնական հաստատությանը վերաբերող որոշումների վրա: Հավեենք նաև, որ ուսումնական հաստատությունում տիրում է այնպիսի մթնոլորտ, որտեղ ուսուցիչները և սովորողներն ազատորեն արտահայտում են իրենց տեսակետները և դիրքորոշումները:
- ✓ Ուսուցիչը կարողանում է լսել սովորողներին, հարցերը դիտարկել նրանց տեսանկյունից:
- ✓ Ուսումնական գործընթացի մասնակիցները և շահառուները՝ սովորողները, ուսուցիչները, դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները, ծնողները, հասարակական և պետական կառույցները համագործակցված՝ նպաստում են դպրոցում և դրանից դուրս իրազեկ լինել Մարդու հիմնարար իրավուքներից և ազատությունից:
- ✓ Համամարդկային արժեքների, սովորողի կյանքի ու առողջության, արժանապատվության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը,

պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:

- ✓ Սովորողներն ուսուցիչների, ծնողների, դասընկերների և աշակերտական ինքնավարության մարմնի աջակցությամբ բացահայտել են իրենց ուժեղ կողմերը (ակադեմիական և ոչ ակադեմիական) և պատրաստ են դրանք ծառայեցնելու հանրությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը հանրակրթության մասին, հոդված 20
2. Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ, հոդված 2, կրթության իրավունք
3. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր՝ ընդունված և հռչակված ընդհանուր վեհաժողովի, 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևով, հոդված 26
4. ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», Պրեամբուլա, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503
5. Гребенюк О.С., Рожков М.И. Общие основы педагогики. М., 2003, с.628
6. http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf, էջ 3
7. http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf
8. http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503
9. http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf